

Ըստուեր կ'ընեն վրադ դափնիները շուրջի.  
 Եւ խաղաղ քունըդ կը հըսկէ Յիշատակ.  
 Դու կը նընջե՛ս, իբրեւ ծըննդեանդ օրն առջի:

Ամեն նոր դար նոր պիտ' բերէ քու անուն,  
 Եւ դու դարձեա՛լ պիտի ծընիս... սըրտի մէջ,  
 Ո՛հ, ո՛չ. երբեք չըվախճանիս պիտի դուն,  
 Չի կապեցիր կեանքդ արեւո՛ւն հետ անշէջ:  
 Օր մը, գուցէ, նոյնիսկ քունէ՛դ ալ զարթնուս՝  
 Երբ հայ ճամբորդ մ'եկած դրախտի Երկրէդ՝ ա՛լ  
 Ժըպիտ բերէ քեզ՝ արցունքի տեղ անյոյս.  
 Օր մը, գուցէ, զարթնուս նոյնիսկ քունէդ ալ:  
 Եւ իցի՛ւ թէ. դեռ պետք ունի Յայը քեզ.  
 Յայը հիւղին, բանտին, վըշտին, խաւարին.  
 Յայն որ՝ անգետ՝ կը սայթաքի աղէկէզ.  
 Եւ Յայն որ՝ նենգ՝ կը սայթաքէ մոլեգին:  
 Տե՛ս, կը սպասենք ամպածըրար, տըխրունակ.  
 Եթէ դու չես կըրնար գալ՝ գեթ դըրկէ մեզ՝  
 Րաֆֆիէն խօսք մը կազդուրող, լուսարձակ,  
 Կամ սիրոյ ցոլք մ'Աբովեանի սըրտէն հեզ:  
 Խօսէ՛, հոգւոյս շողի, յոյսի բառ մ'յետին  
 Թող ցայտէ գանկըդ՝ որ անհուն աշխարհ մ'եր.  
 Միթէ սափորը դատարկուած վարդաջրին  
 Բուրումի հետք մ'ի՞ր կողերուն չի՞ պահեր:  
 Բայց կը լըռե՛ս, ո՛վ մըտածման դու հըսկայ՝  
 Որ սփինքս դարձար երազիդ հետ, անձանձիր,  
 Ա՛լ չես խօսիր, մատը փառքի բերնիդ վրայ  
 Կարծես կ'ըսես խաղաղ ճակտով. “Յեռացի՛ր”: